ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 հունիսի 2020թ. թիվ 435-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2019Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 11-ԻԹԻՎ 594-Ա
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հաշվի առնելով կադրային փոփոխությունները՝

Որոշում եմ.

1. ՀՀ Լոռու մարզպետի 2019թ. հոկտեմբերի 11-ի «Ուղեգրող հանձնաժողովներ ստեղծելու և ՀՀ Լոռու մարզպետի 2018 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 429-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 594-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) «Ք. Վանաձոր և Գուգարքի տարածաշրջան» մասում «Արթուր Մխիթարյան-մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի ժ/պ» բառերը փոխարինել «Արթուր Մխիթարյան - ՀՀ Լոռու մարզպետարանի գլխավոր քարտուղար» բառերով:

2) «Ստեփանավանի տարածաշրջան» մասում՝

ա. «Վալիկո Չալաբյան - հանձնաժողովի նախագահ, «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն» բառերը փոխարինել «Մեսրոպ Հազրոյան - հանձնաժողովի նախագահ, «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար» բառերով:

բ. «Արթուր Վարդանյան - ՀՀ Լոռու մարզպետարանի Ստեփանավանի սոցիալական աջակցության տարածքային գործակալության պետի ժ/պ» բառերը փոխարինել «Լիլիթ Մաղաքյան - ՀՀ Լոռու մարզպետարանի Ստեփանավանի սոցիալական աջակցության տարածքային գործակալության պետ» բառերով:

3) «Սպիտակի տարածաշրջան» մասում «Սիրանուշ Էտիբարյան - հանձնաժողովի քարտուղար, «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի տեղակալ» բառերը փոխարինել «Լիդա Արսենյան - հանձնաժողովի քարտուղար, «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կադրերի բաժնի տեսուչ» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

05/06/20

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2020թ. հունիսի 5
ք.Վանաձոր